ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ ՎԱՏԻԿԱՆԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ, ՀԱՅ ՈՒՂՂԱՓԱՌ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

Մեր Տիրոջ կյանքով, մաՀվամբ և հարությամբ սրբացած երկրից, ուր **«Բանն մարմին եղև»**, հիշելով քրիստոնեական և եղբայրական գործակցությունը Ձեր դիտորդների հետ Վատիկանի երկրորդ ժողովում, և վստահեցնելով Ձեզ Մեր աղոթքների մասին, հղում ենք Ձեզ Մեր լավագույն մաղթանքները խաղաղության և բարգավաճման համար:

ՊԱՊ ՊՈՂՈՍ Զ

7 հունվարի 1964 թ.
ԵՐՈՒՍԱՂԵՄ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻՆ, ԿԱԹՈԼԻԿ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ

ՎԱՏԻԿԱՆ

Հոգեկան հրճվանքով կարդացինք Ձեր հեռագիրը Ս. Քաղաք Երուսաղեմեն, ուր աղոթեցիք Մեր Տիրոջ և Փրկչի գերեզմանի վեմին վրա՝ աշխարհի խաղաղության և եկեղեցյաց և ժողովրդոց եղբայրության համար:

Թո՛ղ Տերը քաղցրությամբ ընդունի Ձեր սուրբ աղոթքը և Ձերդ Սրբության պարգևի երջանիկ հովվապետության երկար տարիներ:

Այս առթիվ Մեր սրտագին գոհունակությունն ենք հայտնում, որ Մեր Եկեղեցու դիտորդները այնքան ջերմ ընդունելության արժանացան Հռոմում Վատիկանի երկրորդ ժողովի օրերին:

Սիրո ողջունիվ, Եղբայր ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

10 հունվարի 1964 թ.
ԷՋՄԻԱԾԻՆ